



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ



այր Արոտ Ս. էջմիածնի կա-
րևոր ձեռնարկություններից մե-
կը Հոգևոր Ճեմարանն է, որը
վերաբացվել է Նորին Ս. Օծու-
րյուն Ս. Տ. Գեորգ Զ. Կարողիկոսի ջանքե-
րով 1945 թվականին և այս տարի ավել է իր
առաջին շրջանավարտները:

Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, սկսած
Գեորգ Դ. Մեծագործ կարողիկոսից, բացա-
ռիկ մեծ գործ է կատարել հայ եկեղեցա-
կան, մտավոր և հասարակական ասպարեզ-
ների համար գործիչներ պատրաստելու ուղ-
ղությամբ: Նա ավել է բազմաթիվ շրջա-
նավարտներ, որոնք աշխատել և այժմ աշ-
խատում են մանկավարժության, գրականու-
թյան, արվեստի և բազմաթիվ այլ բնագա-
վառներում: Մայր արքունի պարծանքով կա-
ռող է նշել, որ իր Ճեմարանի շրջանավարտ-
ների մեջ եղել են և այժմ կան հասարա-
կական և քաղաքական բարձր դիրքի հասած
մեծանուն անձինք: Ներկայումս ծաղկած
Հայրենիքի և Սփյուռքի հայության ո՞ր աս-
պարեզում չի կարելի գտնել նախկին ճեմա-
րանցիների: Ամեն մի ճեմարանցի բացառիկ
ակնածանքով է հիշում այն հաստատություն-
ներ, ուր ինքը իր մտավոր պատրաստությունն
է ստացել: Միջնադարյան մեր գրիչներն
իրենց թողած հիշատակարաններում և հի-

շատակագրություններում սովորաբար մատ-
նացույց են անում և խնդրում են հիշել
իրենց երկու ծնողներին— մարմնավոր ծնող-
ներին՝ իրենց հորն ու մորը և իրենց հոգևոր
ծնողներին՝ իրենց ուսուցիչներին, որոնց
մոտ իրենց կրթությունն են ստացել: Ճեմա-
րանցիների համար, Ճեմարանը, իրոք, հո-
գևոր ծնողի դեր է կատարել:

Ցարական շրջանում Հոգևոր Ճեմարանը,
փաստորեն, չուներ նեղ մասնագիտական
ուղղություն: Նա նպատակ էլ չուներ միայն
հոգևորականներ պատրաստել: Այդ պատ-
ճառով էլ ավանդվող առարկաները, մեծ մա-
սամբ, հանրակրթական էին: Քիչ էին կրո-
նական առարկաները: Ավարտող ուսանող-
ների համար եկեղեցական կոչում ընդունե-
լը պարտավորիչ չէր: Այն ժամանակվա
պայմաններում, երբ հայ ժողովուրդը չուներ
իր բարեխնամ պետականությունը և երբ ցա-
րիզմը ասիմիլատորական (ձուլողական) քա-
ղաքականություն էր վարում, փակում էր
հայկական դպրոցները, հալածում էր հայ
մտավորականներին, Մայր Արքունի, բնական
է, չէր կարող անտարբեր դիտողի դերում
գտնվել, եկեղեցական նեղ շրջանակների մեջ
մեկուսանալ, մտածել միայն իր մասին և իր
Ճեմարանը օգտագործել միայն հոգևորա-
կաններ պատրաստելու գործին: Հայաստան-
յայց Եկեղեցին բնորոշող առանձնահատկու-

բյուրներին մեկը հենց այն է, որ նա միշտ իր ժողովրդի հետ է ֆայլել, միշտ նրա հետ եղել։ Այդ իսկ նկատառումով, Հոգևոր ձեմարանը, իր առջև, նպատակ էր դրել տալ այնպիսի հայազետ մասնագետներ, որոնք ի վիճակի լինեն որոշ շեր կատարելու հայ մտավոր կյանքում։ Եվ, պետք է ասել, Հոգևոր ձեմարանը պատվով կատարեց իր դերը։

Անհրաժեշտ է նկատել, որ Ս. էջմիածինը նյութական մեծ միջոցներ չունեւ։ Նա չէր ստանում պետական դրամական աջակցություն, չունեւ վատիկանի նյութական անսահմանափակ հնարավորությունները, որոնք շալյուրեն տրամադրվում են մարդարության նպատակով դպրոցներ բաց անելու համար։ Եվ Ս. էջմիածինը չի էլ նախանձել այդ կարգի միջոցներ ստացողներին, որովհետև գիտեւ, որ այդ նպատակով օտարի կողմից տրված ամեն մի գումարի դիմաց նպատրեկալը հարկադրված է անպատվաբեր որոշ պարտավորություններ վերցնել իր վրա։

Վերաբացված ներկա Հոգևոր ձեմարանի դերը և նպատակը, նախկին ձեմարանի համեմատությամբ, զգալիորեն տարբերվում է։ Հայրենի կառավարության ստեղծումով Մայր Աթոռն ազատագրվել է ոչ եկեղեցական կարգի շատ պարտականություններից, որոնք բնկել էին Ս. էջմիածնի վրա հայ ժողովրդի ֆաղափական անկախությունը կորցնելուց հետո։ Այժմ Հոգևոր ձեմարանը պարտականություն չունի հայազետներ, մանկավարժներ, գրականագետներ և այս կարգի այլ մասնագետներ պատրաստել։ Պետական համալսարանում և Երևանում ու Հայաստանի այլ ֆաղափներում եղած տասնյակ ինստիտուտներում այժմ մայրենի լեզվով կոփվում, մասնագիտանում են տասնյակ հազարավոր ուսանողներ։ Հայրենի պետությունը ոչ միայն իր վրա է վերցրել բարձրագույն ուսումնական հաստատությունների բոլոր ծախսերը, այլև սովորող ուսանողներին տալիս է բոշակ, մի բան, որը ցայտուն ապացույց է այն մեծ հոգածության, որը ցուցադրվում է, բնդհանրապես, Սովետական Միության մեջ դաստիարակության գործին։ Չկա մասնագիտական մի ուղղություն, որը գոյություն չունենա մեր ոնսպորիկայում։ Այժմ, բնական է, անիմաստ կլինեւ, եթե Հոգևոր ձեմարանը իր վրա վերցներ նախկին ձեմարանի դերն ու ընթացքը։ Ուստի և նա այժմ վերցրել է նոր ուղղություն — պատրաստել Հայ Եկեղեցու դավանանքի և պատմության ֆաջածանոթ մասնագետներ։

Հմուտ եկեղեցականներ պատրաստելու

խնդիրը հրամայական պահանջ է առանձնապես ներկայումս, երբ բարձրաստիճան հայ հոգևորականության ավագ սերունդը աստիճանաբար հեռանում է մեզանից, իսկ նրանց փոխարինողներ չկան։ Ճիշտ է, արտասահմանում կան հոգևորականներ պատրաստող երկու դպրոցներ՝ Մոսկովյան Հակոբյանց միաբանության Ժառանգավորաց վարժարանը Ս. Երուսաղեմում և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Գաբրիելյանը Անթիլիասում, որոնց շրջանավարտները մասամբ մեղմում են պատրաստված հոգևորականության այն բացը, որ նկատվում է այժմ Հայաստանյայց Եկեղեցու ներսում։ Սակայն այդ դպրոցների շրջանավարտները քվով շատ քիչ են և չեն կարող բավարարել մեր Եկեղեցու մեծ պահանջները։ Հայաստանյայց Եկեղեցին ներկա շրջանում ավելի ֆան երբեք կարիք ունի եկեղեցական ավանդություններով դաստիարակված, հայրենասիրական լիցք ունեցող, եկեղեցական աշխատանքը հասարակական և հայագիտական աշխատանքին համատեղող, կյանքի հետ ծանոթ, կայուն նկարագրով պատրաստված հոգևորականների։

Վերջին շրջանում, ցավով պետք է նշել, որ վատիկանը վերսկսել է իր մարդարական ֆարզությունը հայկական համայնքներում։ Այդ նպատակով նյութական հսկայական միջոցներ են տրամադրված. որոշ տեղերում նույնիսկ գործադրվում են բռնություններ։ Այն փաստը, որ վատիկանը, իր հայանուն պրոպագանդիստների միջոցով, սկսել է կաթոլիկ ավագանում մկրտել նույնիսկ Ս. Գրիգոր Լուսավորչին, Ս. Սահակին և Ս. Մեսրոպին և մեր կաթոլիկոսներից շատերին, պարզ ցույց է տալիս նրա դիտավորությունը — դավանափոխ անել Սփյուռքի անպաշտպան հայ համայնքները և ձուլման ենթարկել նրանց։ Իսկ այս ամենը քելադրում է Հայ Եկեղեցու վերադաս հաստատություններին՝ լուրջ ուշադրություն դարձնել բարձրագույն ուսմամբ եկեղեցականներ պատրաստելու գործի վրա։

Անհա քե ինչո՞ւ այս խնդիրը Ամենայն Հայոց Հայրապետի ուշադրության գլխավոր խնդիրներից մեկն է հանդիսացել իր գահակալության առաջին շրջանից և էլ այժմ։ Նախորդ ազգային-եկեղեցական ժողովում վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր ծրագիրը Ս. էջմիածնի Հոգևոր ձեմարանի վերաբացման առթիվ և արժանացավ ժողովականների հավանության։

Ժողովից հետո վեհափառ Հայրապետն իր ծրագիրը գործի վեր ածեց. վերաբացվեց Ս. էջմիածնի Հոգևոր ձեմարանը գիշերօրիկ,



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՍԱՆՆԵՐԸ

ընդունվեց ուսանողությունը, հրավիրվեցին բարձրորակ դասախոսներ, բացվեց լսարանական բաժինը:

Վեհափառ Հայրապետը Հոգևոր ձեմարանի նկատմամբ ներկայումս անում է իր կարելիքը: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ որոշ դեպքում Ամենայն Հայոց Հայրապետության ցանկությունը չի համընկնում իր ունեցած հնարավորությունների հետ: Այսպես, Ամենայն Հայոց Հայրապետությունն ի վիճակի չէ մեծացնել Հոգևոր ձեմարանի ուսանողության ոչ սովոր բիվը և հարկադրված է եղել վերջին տարիներս սահմանափակել ընդունելությունը: Առտասանմանի և տեղական բեմերի կողմից ձեմարանին որոշ օգնություն ցուցադրվել է: Սակայն ցավալի է նշել, որ արտասահմանի բարենորարներից ոմանք չկատարեցին իրենց խոստումը: Ա. Էջմիածնին Հոգևոր ձեմարանի օգնության խնդրում որոշ խոստում տվել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը: Անշուշտ ես չի բերանա կատարելու իր խոստումը: Առաջիկա, ձեմարանի պահպանման գլխավոր ծանրությունը ընկել է միայն Մայր Հայրենիքի հոգևոր բեմերի վրա:

Նոր, վերաբացված ձեմարանի հիմնական խնդիրն է՝ հոգևորականներ պատրաստել, ուստի ձեմարանի ծրագրում գլխավոր տեղը տրված է կրոնական-աստվածաբանական առարկաներին: Դասավանդվում են՝ աստվածաբանություն, կրոնների պատմություն, ներածություն Ա. Գրոց, մեկնություն Հին և Նոր Կտակարանների, Հիսուսի կյանքը և կրոնական այլ առարկաներ:

Սակայն Վեհափառ Հայրապետի ցանկությունն է, որ ձեմարանն ավարտած այդ եկեղեցականները չլինեն գիտությունից կտրված նեղմիտ կղերականներ, այլ ծանոթ լինեն մեր ժողովրդի անցյալ պատմությանը և դպրությանը, հանաչեն կյանքը: Մեր վանքերն անցյալում գրչության օջախներ են հանդիսացել, ուր սրբությամբ պահվել են մեր մատենագիրները: Մեր վանականները մեծ գործ են կատարել հայ գրագրերն ընդօրինակելու և նրանք նոր արժեքներով հարստացնելու ուղղությամբ: Մեր ներկա եկեղեցականներն ևս պիտի կտրված չլինեն հայագիտությունից և եկեղեցական հիմնական աշխատանքին զուգընթացաբար, պիտի կատարեն որոշ հայագիտական աշխատանք: Այդ խնդրում նրանց համար օրինակ կարող են ծառայել շնորհազարդ Ս. Տ. Գարեգին Ա. Կարողիկյանը,

սր, հանգուցյալ Արտավազդ սրբազանը, ամենապատիվ Գարեգին պատրիարքը և ուրիշները: Վեհափառ Հայրապետի պահանջով, ձեմարանի ծրագրում լայն տեղ է հատկացված հայագիտական առարկաներին: Դասավանդվում են՝ հայոց պատմությունը երեք դասընթացներով — հին, միջին և նոր — հայ պատմագրություն, հայկական հեագրություն, հայոց պատմագիտություն, հայկական տոմար, հայկական երաժշտություն և այլն: Մասնագիտական այս առարկաներին զուգընթաց, ուշադրություն է դարձվում նաև հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների՝ գրաբարի, ռուսերենի և անգլերենի:

ձեմարանի վրա բացառիկ ուշադրություն է դարձնում և գուրգուրանքով վերաբերվում նորին Ս. Օծություն Ս. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Հայրապետը: Նա իր խոսակցության ժամանակ բազմիցս նշել է. «Իմ ցանկություններից երկուսն ամենից կարևորն են համարում — առաջին՝ տեսնել Մայր Տաճարը նորոգված, և երկրորդ՝ նորաբաց ձեմարանի շրջանավարտներով ի վիճակի գտնվել ծածկելու Հայ եկեղեցու ասպարեզում եղած բացը»: Վեհափառ Հայրապետը հաճախ է լինում ձեմարանում, ներկա է գտնվում դասախոսություններին, որպես հին մանկավարժ անում է իր արժեքավոր դիտողությունները, միշտ ներկա է լինում ֆենություններին, հետաքրքրվում է ամեն մի ուսանողի վիճակով և անշափ ուրախանում իր ձեռնով անեցրած յուրաքանչյուր սանի հաջողությունը տեսնելիս:

Յոթը տարվա իր գոյությունից հետո, այս տարի Հոգևոր ձեմարանը տվեց իր առաջին շրջանավարտները — երրորդ լսարանը ավարտեց ինը ուսանող, որոնցից մեծ մասը լավ և գերազանց գնահատականներով: Ավարտող ուսանողներից ութը հոգի ընդունեցին սարկավագական կոչում: Ըստ գոյություն ունեցող կարգի, ավարտող ուսանողները ներկայացրին իրենց ավարտական շարադրությունները, որոնք, մեծ մասամբ, հայ մատենագրությունից և պատմությունից են: Այդ աշխատություններն ուղարկվեցին ընդգիմախոսների մոտ գրախոսության և ֆենվեցին մանկավարժական ժողովում: Վեհափառ Հայրապետը, Ս. Նրուսադեմի հայոց պատրիարսական տեղապան ամենապատիվ Եղիշե սրբազանը, Վահան, Նորայր, Սահակ և Սուրեն սրբազանները ներկա էին մանկա-

վարժական այն ժողովում, ուր ֆենվում էին ավարտական շարադրությունները և շատ զոն մնացին: Նորին ամենապատվություն տեր Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը մեր քրքակցին տված ինտերվյուի մեջ ձեմարանի շրջանավարտների կապակցությամբ հայտարարել է հետևյալը. «Հոգևոր ձեմարանի ծրագիրը մեր կրոնական բարձրագույն ընծայարաններում ծրագիրն է, որ տարիներն է վեր առաջ կտարվի վերին աստիճանի պատրաստված, ձեռնհաս դասախոսներում անձնակազմի մը կազմն: Ես էջմիածին հասա, երբ արդեն ավարտած էին ձեմարանի տարեվերջի ֆենությունները, և, դժբախտաբար, չկարողացա ներկա գտնվիլ այդ ֆենություններում: Բայց ինձի ընծայվեցավ ֆաղցրագույն առիթը աչքն անցնելու ընծայացումներում ավարտական քեզերը, և այդ քեզերում երկուսին՝ Նարեկացիի և Սայաթ-Նովայի մասին ուսումնասիրություններում ֆենարկումը ես կատարեցի: Իմ տպա-

վորությունը այդ քեզերում հեղինակներում ուսումնական մակարդակին և հասկացողության մասին ավելի ֆան դրական է»:

Կասկած լինել չի կարող, որ մեր քեմերը, մեր էջմիածնասեր հավատացյալները ամեն կերպ սատար կհանդիսանան վեհափառ Հայրապետի ցանկությանը՝ Հոգևոր ձեմարանը ավելի ընդլայնելու և ավելի բարձր դիրքի վրա դնելու գործում, և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ իր գոյության ավելի ֆան տասնվեց և կես դարերի ընթացքում ունեցել է իր պատրաստված ու նվիրված հոգևորականները, ի վիճակի կլինի նոր ժամանակաշրջանում ևս տալ բարձր պատրաստությամբ լուսամիտ հոգևորականներ:

Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ «էջմիածին» ամսագրի ներկա համարում տպագրվում են որոշ նմոշներ շրջանավարտ ուսանողների ավարտական շարադրություններից:

